են տալիս բոլոր միջոցները գործադրել եւ ժողովրդի մէջ եղած ոգեմտմթերքը տրամադրել ինքնապաշտպանութեան գործին:

Ճիշդ է, 7-րդ համագումարը որոշում է համաձայնութիւն կնքել Ադրբէյջանի կառավարութեան հետ, բայց նա համոզուած լինելով, որ Ադրբէյջանի կառավարութիւնը հանդիստ պիտի չմնայ եւ մի կողմից Սուլթանովի աւազակային խմբերով անկարգութիւններ առաջ պիտի բերէ. իսկ միւս կողմից էլ հայ գործակալների միջոցով հայկական շրջանները դինաթափ պիտի անէ, առաջարկում է Ազգային Խորհրդին ինքնապաշտպանական մարմին կազմել:

Համագումարի աշխատանքները տեւում են տասը օր: Որից յետոյ, համագումարը մի յանձնաժողով է ընտրում՝ տասն եւ հինգ հոգուց բաղկացած, եւ ուղարկում է Շուշի՝ Ադրբէյջանի կառավարութեան նահանգապետ Ս. Սուլթանովի հետ համաձայնութեան պայմանագիրը ստորագրելու:

Օգոստոս 22-ին Շօշու գիւղից, համագումարի կողմից ընտրուած յանձնաժողովը գալիս է Շուշի:

Շուշուայ քաղաքացիները, Ռէալական դպրոցի դիմացի հրապարակում, ընդունելութեան պատրաստութիւններ են տեսնում:

Ս. Սուլթանովը, Շուշուայ զօրամասով, ինչպէս նաեւ թաթար եւ հայ ներկայացուցիչներ, քաղաքի ներքեւի դարպասայի մօտ դիմաւորում են պատգամաւորներին եւ մեծ հանդէսով նախ բարձրանում են հայկական թաղը, ապա գնում են հրապարակը, որտեղ եւ միտինգ է տեղի ունենում:

Խօսում են Վահան եպիսկոպոսը, Սուլթանովը, մի թաթար ուսուցիչ եւ պատգամաւորներից երկու հոգի:

Բոլորն էլ այն միտքն են յայտնում, որ երկու ժողովուրդները ձեռք-ձեռքի տուած իրենց համերաշխ գործունէութեամբ պիտի աշխատեն խաղաղ մնալ եւ անհամաձայնութիւններից ու կոտորածներից խուսափել:

Երկու ժողովուրդների ներկայացուցիչները խոստանում են պայմանագրի կէտերը ամենայն ճշդութեամբ յարգել, որից յետոյ միտինգը ցրւում է:

Թաթար ժողովրդի ոգեւորութեանը չափ ու սահման չկար, ամբողջ մի տարի չարչարուելուց յետոյ, վերջապէս Սուլթանովին յաջողւում է խորամանկ միջոցներով եւ սպառնալիքների տակ լեզու գտնել գաւառի հետ եւ ժամանակաւորապէս համաձայնութիւն կնքել:

Համաձայնագիրը ստորագրուելուց երկու օր յետոյ, ընտրւում է հայերից մի Խորհուրդ, երեք հոգուց բաղկացած՝ Յ. Բ., Լ. Վ. եւ բժ. Եարամիչեան: Նահանգապետի օգնական է ընտրւում Գիդի Քալանթարեան: Սրանք եւ Խոսրով բէկ Սուլթանովի հետ սկսում են աշխատել:

Թէ՛ այդ խորհուրդը եւ թէ՛ նահանգապետի օգնականը, առանձին աչքի զարնող գործ չեն կարողանում կատարել, քանի որ այդ Խորհուրդը մի անուանական մարմին էր եւ Սուլթանովը հաշուի չէր առնում նրան, ու իր կառավարութեան ծրագրած հրահանգներովն էր առաջնորդւում:

Համաձայնութիւն կայացնելուց յետոյ, պիտի ասել, որ հայկական շրջանները իրենց խաղաղ գիւղատնտեսական աշխատանքներով են զբաղւում:

Մի առ ժամանակ էլ հարեւան թաթարների — հայեր կոտորելու ու թալանելու — կրքերը հանդստանում են:

Շուշի-Եւլախ խճուղին յայտարարւում է բաց: Սակայն հայերից շատ քչերն են հաւատում այդ յայտարարութեանը եւ մեծաւ մասամբ Գանձակի ճանապարհովն են ճամբորդում:

Աղդամի եւ Կարիագինի շուկաները, բացւում են հայերի առաջ եւ մթերքներ են ծախում. իսկ մինչ այդ երկու շուկաներն էլ փակ էին հայերի համար:

Այս ձեւով Սուլթանովը մի քանի շաբաթ հայ ժողովրդին սիրաշահում է:

Ադրբէյջանի կառավարութիւնը լաւ իմանալով, որ Հայկական Ղարաբաղի որոշ շրջաններ՝ Խաչէնն ու Վարանդան տնտեսական նեղ վիճակի մէջ են, մեծ զումարներ է տրամադրում Ս. Սուլթանովին, որպէսզի դրամի միջոցով դինաթափ անէ այդ շրջանները:

Սուլթանովն էլ իր գործակալների՝ հայ սրիկաների միջոցով իրագործում է իր կառա-